



Աշխատություն 05(07), Մայիս 2007, Երևան, Հայաստան
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

Բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության արդյունավետությունը

Կարինե Հարությունյան
Մուշեղ Թումասյան

*Թողարկումը պատրաստվել է «Աջակցություն ԱՀԴԾ գործընթացին» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի
Չարգացման Ծրագրի և Օքսֆամ ՄԲ աջակցությամբ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Կրթության զարգացման գերակայությունը
3. Կրթության ոլորտի կարգավորումը
4. Կրթական ծրագրերը և դրանց ընկալումը
5. Հանրային ծախսերը կրթության ոլորտում
6. Դիպլոմների, թե՛ կրթության արտադրություն
7. Քաղաքականության վերանայման պահանջը

1. Ներածություն

Սույն հոդվածը նպատակ ունի ընդլայնել Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումների շուրջ քննարկումները և նպաստել երկրում ԱՅԴԾ և այլ զարգացման ծրագրերի շրջանակներում կրթության ոլորտում քաղաքականության բարելավմանը: Հոդվածի առաջին բաժիններում ներկայացվում են մրցունակ և որակյալ կրթահամակարգի առկայության ռազմավարական նշանակությունը Հայաստանի համար, կրթության ոլորտի կարգավորման օրենսդրական դաշտը, հեղինակների կողմից կրթական ծրագրերի ընկալումը կամ մեկնաբանությունը: Առանձին բաժնով հակիրճ ներկայացվում է ոլորտին ուղղվող հանրային ծախսերի վերլուծությունը: Հոդվածում վեր են հանվել և բացահայտվել են կրթական համակարգում գոյություն ունեցող խնդիրները: Մասնավորապես, քննարկվել են համակարգի կեղծ հեղինակության և որակի, ԲՈՒՀ-երի միջև ազատ մրցակցության բացակայության, համակարգի ադմինիստրատիվ կարգավորման, կոռուպցիոն ռիսկերի և պետական պատվերի քաղաքականության անարդյունավետության խնդիրները: Հեղինակները, համապատասխան քանակական հետազոտությունների բացակայության պատճառով, առավել շատ հիմնվել են իրավիճակի փորձագիտական գնահատականների և որակական վերլուծությունների վրա՝ օգտվելով S23 կենտրոնում տարիներ շարունակ պրակտիկայի մասնակցող ուսանողների հետ հարցազրույցներից և ԲՈՒՀ-ի հետ անմիջական շփումներից:

Հոդվածում առաջարկվում են քաղաքականության բարելավման մի շարք ուղղություններ, որոնք առավել խորը վերլուծություններից և մշակումից հետո արժե կյանքի կոչել: Մասնավորապես առաջարկվում է ինտենսիվացնել բարեփոխումների տեմպը՝ դրանք հատկապես ուղղելով կրթության բովանդակության համապատասխանեցմանը և կադրերի ստեղծմանը և վերապատրաստմանը: Միաժամանակ, առաջարկվում է վերացնել բանակից տարկետման իրավունքը՝ ԲՈՒՀ-երի համար ստեղծելով հավասար պայմաններ: Բարձրագույն կրթության ոլորտում պետական պատվերի քաղաքականության արդյունավետության բարձրացման համար առաջարկվել են քաղաքականության մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են երկրում կրթական վարկերի և գրանտների տրամադրման ինստիտուտի զարգացմանը, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կրթության մատչելիության բարձրացմանը, երկրի համար ռազմավարական կարևորություն ունեցող մասնագիտությունների գծով կրթության ներմուծմանը և այլն:

Այնուհանդերձ, առանց համապատասխան հոգածության և քաղաքական կամքի կրթական համակարգի զարգացումը տեսանելի չէ: Չնայած օրենքի պահանջին, այսօր երկրում չի գործում կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմք հանդիսացող «Կրթության զարգացման պետական ծրագիրը»:

2. Կրթության զարգացման գերակայությունը

Ավնհայտ է, որ ժամանակակից աշխարհում որևէ երկրի և հասարակության համար կրթության դերը խիստ որոշիչ է: Կրթությունը մարդկային կապիտալի և հասարակությունում սոցիալական կապիտալի զարգացման կարևոր և հիմնական գործոնն է: Չարգացած տնտեսությունները հիմնվում են որակյալ աշխատուժի և գիտատար տեխնոլոգիաների վրա: Ազգային և համամարդկային արժեքների պահպանումը երաշխավորվում է երկրում և հասարակությունում առկա կրթության մակարդակով: Կրթության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է:

Թերևս, որևէ երկրի զարգացման ազգային ռազմավարական փաստաթղթում կրթությունը ունի իր ուրույն և կարևոր տեղն ու դերը: Հայաստանում, ԱՅԲՓ փաստաթուղթը, որն ըստ էության հանդես է գալիս որպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական երկարաժամկետ ռազմավարական ծրագիր, կրթության բնագավառի զարգացումը դիտում է որպես «տնտեսության առաջննթացի առաջնային գերակայություն»¹:

Իրապես, այսօր Հայաստանի զարգացման և մրցունակության, համաշխարհային տնտեսությունում ինտեգրման ամենաարդյունավետ, և թերևս միակ ռեսուրսը կարող է լինել բարձրորակ մարդկային կապիտալը և դրա միջոցով ստեղծվող տեխնոլոգիաները: Հայաստանի համար պարտադրված է ոչ բնական ռեսուրսների հաշվին տնտեսական զարգացման ուղին: Այսինքն՝ լինել արտադրողական, արդյունավետ կառավարվող, մրցունակ և հասկանալի: Ուստի, Հայաստանի համար կրթության բարձր մակարդակի, արդյունավետ և մրցունակ կրթահամակարգերի առկայությունը պետք է դիտել որպես գոյության և զարգացման պահանջ: Մի շարք առանձին հետազոտություններ ապացուցել են կրթության և աղքատության մակարդակների միջև հակադարձ կապի գոյությունը: Սա ճիշտ է նաև Հայաստանի պարագայում. հետազոտությունները պարզել են², որ կրթության բարձր մակարդակներում աղքատության ռիսկն էապես նվազում է:

¹ Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Երևան, 2003թ., կետ 331, էջ 121:

² Տե՛ս « Աղքատության կրճատումը Հայաստանում. հին չափանիշներով նոր կյանքը», Մ. Թումասյան, S23 կենտրոն, Երևան 2007:

3. Կրթության ոլորտի կարգավորումը

Հայաստանում կրթության բնագավառը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, Կրթության մասին ՀՀ օրենքով, Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքով, Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքով, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Կրթության մասին ՀՀ օրենքը սահմանում է կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները և երաշխիքները, կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների, պետական կրթական չափորոշիչների և կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները և այլն:

Ներդիրներում ներկայացված են Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը և կրթական իրավունքի պետական երաշխիքները:

Ներդիր 1. ՀՀ Կրթության մասին օրենքից

Հոդված 4. Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:
2. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:
3. Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին:
4. Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:
5. Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

Ինչպես երևում է բերված հղումներից, օրենքները և քաղաքականության փաստաթղթերը շատ լուրջ հռչակումներ ունեն, սակայն դրանք, ինչպես և այլ դեպքերում, դեռևս միայն թղթի վրա են: Օրինակ՝ պետությունը հռչակել և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն, սակայն արդյո՞ք դա այդպես է: Արդյո՞ք, օրինակ, բանկային համակարգը չունի առավել առաջանցիկ զարգացում, քան կրթական համակարգը: Վերջապես, ինչպե՞ս չափենք, և համոզվենք՝ դա այդպես է, թե՞ ոչ: Ավելին, Կրթության մասին օրենքը հռչակում է, որ «Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը» կամ «Կրթության բնագավառի պահպանման և զարգացման համար պետությունը կատարում է նպատակային ֆինանսավորում, որի ծավալները որոշվում են կրթության

զարգացման պետական ծրագրին համապատասխան»: Չավեշտալի է, սակայն վերջին երկու տարիներին Հայաստանում չկա «Կրթության զարգացման պետական ծրագիր»:

Ընդհանուր առմամբ, արժե նկատել, որ բարեփոխումները, հատկապես բարձրագույն կրթության համակարգում, չափազանց ուշացել են: Հանրակրթությունը ստացել է ապահինստիտուցիոնալ բնույթ, գիտելիքները և կրթությունը մատուցում են անհատ կրկնուսուցիչները, նախնական կամ միջին մասնագիտական կրթությունը գրեթե բացակայում է, բարձրագույն կրթությունն անպիտանության աստիճանի անորակ է: Ցավալի է, որ բացակայում են համապատասխան քանակական հետազոտությունները, որոնք վստահաբար կփաստեն կրթական համակարգի ճգնաժամը:

Ներդիր 2. ՀՀ Կրթության մասին օրենքից

Յոդված 6. Կրթական իրավունքի պետական երաշխիքները

1. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով:
2. Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ:
3. Պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:
4. Պետական հանրակրթական դպրոցների առաջինից երրորդ դասարանների աշակերտներին պետությունը, պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար ապահովում է դասագրքերով, բացառությամբ օտար լեզուների և երաժշտության դասագրքերի, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:
5. Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին պետությունն աջակցում է՝ ստանալու համապատասխան մակարդակի կրթություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
6. Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:
7. Պետությունը նպաստում է, որ կրթական գործունեությանը մասնակցի նաև սփյուռքահայությունը:

4. Կրթական ծրագրերը և դրանց ընկալումը

Կրթությունը բովանդակային իմաստով լայն է, ուստի և այն կազմակերպվում է ըստ տարբեր ծրագրերի: Կրթական ծրագրերը բաժանվում են երկու խմբի՝ հանրակրթական և մասնագիտական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

Հանրակրթությունն այն հիմնական մեխանիզմն է, որի արդյունքում ձևավորվում է «անհատը» և «երկրի քաղաքացին»: Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են մարդու ազատ և համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը և հետագա մասնագիտական կրթության ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը: Այլ կերպ ասած՝ հանրակրթական ծրագրերը պետք է նախ ապահովեն մարդու իրավունքը՝ իր տեսակի մեջ աշխարհում լինել հավասար, տեղյակ և մրցունակ (ըստ բնատուր կարողությունների): Հանրակրթական ծրագրերի արդյունքում պետք է ապահովվի նաև ազգի պահպանման և զարգացման իրավունքը, այսինքն՝ ունենալ այնպիսի անհատների հասարակություն, ուր համամարդկային արժեքներին զուգահեռ, պահպանվում և փոխանցվում են ազգային արժեքները և մշակույթը: Հանրակրթական ծրագրերը պետք է ապահովեն նաև պետական և հասարակական այլ շահերը, այսինքն՝ ձևավորեն և դաստիարակեն քաղաքացիական գիտակցություն, օրինականություն, համագործակցություն և պատասխանատվություն, բնության պաշտպանության գիտակցություն և այլն: Այսպիսով, հանրակրթական ծրագրերի նկատմամբ ներկայացվող պահանջները մեծ են, իսկ շահառուներն են և՛ անհատը, և՛ ազգը, և՛ պետությունը:

Մասնագիտական կրթության ծրագրերը, հիմնվելով հանրակրթական ծրագրի վրա, Հայաստանում բաժանվում են՝ 1) նախնական մասնագիտական (արհեստագործական), 2) միջին մասնագիտական, 3) բարձրագույն մասնագիտական, 4) հետբուհական մասնագիտական:

Եթե հանրակրթական ծրագրերն ուղղված են անհատի և քաղաքացու ձևավորմանը, դաստիարակմանը և զարգացման հիմքերի ստեղծմանը, ապա մասնագիտական ծրագրերը պետք է սոսկ ուղղված լինեն մասնագետի ձևավորմանը: Այսինքն՝ այս ծրագրերը ենթադրում են համապատասխան որակավորման մասնագետների պատրաստում, կարողությունների և հմտությունների ձևավորում և զարգացում, գիտելիքների ընդլայնում և որակավորման բարձրացում: Մասնագիտական կրթությունը պետք է դիտել որպես անհատական զարգացման ներդրումային ծրագիր: Յուրաքանչյուրն իր հնարավորությունների, կարողությունների և նախասիրությունների արդյունքում կայացնում է խիստ անձնական որոշում որևէ մասնագիտական կրթություն ստանալու վերաբերյալ՝ ելնելով անձնական եկամուտների, այլ նյութական և ոչ նյութական շահերի (պահանջմունքների) բավարարման խնդիրներից: Թեև մասնագիտական կրթությունը խիստ անձնական պրոյեկտ է, պետությունը և հասարակությունը նույնպես կարող են լինել մասնագիտական կրթական ծրագրերի շահառու: Պետական և հասարակական շահն առանձին դեպքերում կարող է պահանջել, որ պետությունը մասնակցի մասնագիտական կրթական ծրագրերին՝ տնտեսական զարգացման նպատակներից ելնելով խրախուսի որակյալ մասնագետների

առկայությունը երկրում կամ ազգային անվտանգության նպատակներից ելնելով՝ ապահովի կամ արտադրի որոշակի կոնկրետ մասնագետների:

Ի տարբերություն հանրակրթական ծրագրերի, մասնագիտական կրթությունը չպետք է ունենա հայրենիք, և ազգային դիմագիծ: Այսինքն՝ նույն մասնագիտության տեր, աշխարհի տարբեր ծայրերում կրթված մարդիկ պետք է ունենան նույն, համարժեք մասնագիտական որակավորումը, թեև դրանցից մեկը կարող է լինել ավելի խելացի, փորձառու, պիտանի կամ լավ մասնագետ: Այլ կերպ ասած, համաշխարհային հանրության որևէ ազատ երկրում կրթված մասնագետը (լինի դա տնտեսագետ, բժիշկ, իրավաբան, զոդող կամ ավտոմեքանիկոս և այլն) բովանդակային իմաստով չպետք է տարբերվի մյուս երկրներում կրթվածներից և անհրաժեշտության դեպքում պետք է կարողանա օգտագործել իր մասնագիտական կարողություններն այլ երկրներում:

Թեև հանրակրթությունը բոլորի համար պետք է հավասար հնարավորություն ստեղծի մասնագիտական կրթության ընտրության հարցում, այնուամենայնիվ, բարձրագույն կրթական ծրագրերի մասսայականությունը տեղին չէ: Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրերն են, որ պետք է լինեն առավել հասանելի, մատչելի և ընդունելի: Այս կրթահամակարգը պետք է ապահովի համապատասխան որակավորում պահանջող բազմաթիվ որակյալ մասնագետների ներկայիս պակասը: Այսօր շատ ու շատ մասնագիտությունների գծով զբաղվածները չունեն պահանջվող համապատասխան նախնական և միջին մասնագիտական կրթություն: Փոխարենը, ամեն քայլի կարող ենք հանդիպել բարձրագույն կրթությամբ վարորդների, բանվորների, ավտոմեքանիկոսների, սպասավորների և այլն: Կրթական համակարգն աղավաղում է աշխատուժի շուկան: Արդյունքում, ստանում ենք ցածր որակի ծառայություններ, կամ արտադրության պրոցեսը ոչ արդյունավետ է:

Բարձրագույն կրթության համակարգի մուտքի մատչելիությունը և մասսայականությունը հանգեցրել է ցածրորակ կրթության: Այսինքն՝ արտադրվում են մասնագետներ որոնք իրականում մասնագետ չեն և առանց վերապատրաստման կամ նոր կրթության ձեռքբերման չեն կարող աշխատել: Թեև ներդրվել են պահանջված ֆինանսական ռեսուրսները և ժամանակը, սակայն չեն իրագործվել անձնական պլանները և սպասումները: Արդյունքում, հաճախ մարդիկ աշխատանք են գտնում այն ոլորտներում, որի համար պահանջվող կրթությունը երբեք չեն ստացել:

Բարձրագույն բուհական և հետբուհական կրթությունը պետք է լինի միմիայն որակյալ և միջազգայնորեն մրցունակ: Մոտ ապագայում այն չի կարող լինել մատչելի բոլորի համար և մասսայական, և դրա անհրաժեշտությունը չկա: Բարձրագույն կրթությունը շատ թանկ և աշխատատար գործընթաց է, և պահանջում է համապատասխան ռեսուրսների, ավանդույթների և փորձի առկայություն: Բարձրագույն կրթություն պետք է ստանան քչերը, սակայն նրանք պետք է ստանան միմիայն բարձր որակի կրթություն:

Նախնական և միջին մասնագիտական կրթությունը պետք է հանդիսանա Հայաստանում աղքատության կրճատման հիմնական երաշխիքը, իսկ բարձրագույն կրթությունը՝ երկրի զարգացման երաշխիքը:

5. Հանրային ծախսերը կրթության ոլորտում

Կրթության և գիտության ոլորտի պետական ֆինանսավորումը պետական բյուջեի ամենամեծ ծախսային ուղղություններից է: 2007 թվականի պետական բյուջեով նախատեսվում է ոլորտին ուղղել 91.8 միլիարդ դրամ, որը կազմում է պետական բյուջեի 16.4 տոկոսը՝ զիջելով միայն պաշտպանության ոլորտի ծախսերին: Այս գումարի հիմնական մասը՝ 85.5 միլիարդ դրամը բուն կրթության ոլորտի ֆինանսավորումն է: Այն կազմում է ՀՆԱ-ի 2.9 տոկոսը՝ 1997 թվականի 1.9 տոկոսի դիմաց: Չնայած կրթության ֆինանսավորման աճին, այն դեռևս եապես զիջում է (շուրջ 2.5 անգամ) 1990 թվականի մակարդակին և ԿԸԵ և ԱՊՀ երկրների համապատասխան միջին ցուցանիշներին:

Աղյուսակ 1. Կրթության բնագավառի ֆինանսավորումն ըստ կրթական համակարգերի

	2006	2007	Փոփոխությունը 2006-ի նկատմամբ	
	միլիոն դրամ	միլիոն դրամ	միլիոն դրամ	տոկոս
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	61,737	68,947	7,210	11.7%
Հատուկ ընդհանուր կրթություն	4,335	5,173	838	19.3%
Արտադպրոցական դաստիարակություն	2,477	2,015	-462	-18.6%
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	1,015	1,468	453	44.7%
Միջին մասնագիտական կրթություն	1,828	2,275	447	24.5%
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	5,302	5,627	324	6.1%
Ընդամենը	76,694	85,504	8,810	11.5%

Կրթության ոլորտի ծախսերի գերազանց մեծամասնությունն ուղղվում է «Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության համակարգի» ֆինանսավորմանը: 2007-ին նախատեսվում է, որ այն կկազմի ընդամենը 68.9 միլիարդ դրամ, որից միայն 47.8 միլիարդ դրամն է ուղղվում բուն հանրակրթական ուսուցմանը³: Արդյունքում մեկ միջին դպրոցում միայն ուսուցման համար տարեկան ծախսվում է շուրջ 33.5 միլիոն դրամ⁴ կամ 95 հազար ԱՄՆ դոլար:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և Միջին մասնագիտական կրթության համակարգեր 2007-ին ուղղվելու են Կրթության ոլորտի ծախսերի համապատասխանաբար 1.7 և 2.7 տոկոսը կամ ընդամենը 3.7 միլիարդ դրամ:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգ է ուղղվում կրթության ոլորտի ընդամենը ծախսերի 6.6 տոկոսը կամ 4.1 միլիարդ դրամ:

³ Ընդգրկում է «Հանրակրթական ուսուցման» ծրագրերը, ինչպես նաև «Երաժշտական դպրոցներում ուսուցում» և «Երեկոյան ուսուցում» ծրագրերը: Մնացած գումարից 14.6 միլիարդ դրամն ուղղվում է կրթական օբյեկտների շինարարությանը և նորոգմանը:

⁴ ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ՝ հաշվարկված 2005/2006 ուսումնական տարվա դպրոցների և աշակերտների թվի հիման վրա:

Աղյուսակ 2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն

Մատուցվելիք ծառայություններ	Շահառուների քանակը	Նախատեսված գումարը	Տարեկան 1 շահառուի հաշվով ծախս
		միլիոն դրամ	դրամ
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսուցում	12,312 ուսանող	2,031	164,963
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսուցում - 2006-ից սկսվող նոր ընդունելության մասով	5,906 ուսանող	991	167,821
Բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների կազմակերպում	12,500 դիմորդ 180	10	800
Աջակցություն ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների մատուցմանը	փաստաթղթերի իդենտիֆիկացում	28	152,690
Պետական աջակցություն բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներին	16 բուհ	50	3,125,000
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	10,182 ուսանող	660	64,788
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ - 2006-ից սկսվող նոր ընդունելության մասով	4,898 ուսանող	316	64,462
«Չեյթուն» ուսանողական ավանի սուբսիդավորում	600 ուսանող	20	32,581
Փոխհատուցում զոհված (մահացած) զինծառայողների երեխաներին բուհերում վճարովի ուսուցման համար	7 երեխա	15	2,142,857
Ընդամենը	-	4,120	-

Այսպես, հանրապետության 16 բուհերում հանրության հաշվին սովորող 12,312 ուսանողների բարձրագույն կրթության համար 2007 թվականին պետական բյուջեից կհատկացվի շուրջ 2.0 միլիարդ դրամ (յուրաքանչյուր ուսանողի հաշվով տարեկան միջինում 164,963 դրամ): Այդ ուսանողներից 10182-ին կտրամադրվի նաև կրթաթոշակ, որի համար պետական բյուջեից կհատկացվի ևս 659.7 միլիոն դրամ (միջին ամսեկան կրթաթոշակի չափը կկազմի 5400 դրամ):

Բացի այդ, 5906 նոր ուսանողների ընդունելության մասով վերոհիշյալ 16 բուհերին կտրամադրվի 991.2 միլիոն դրամի պետական ֆինանսավորում⁵: Այդ ուսանողներից 4898-ին կտրամադրվի նաև կրթաթոշակ, որի համար պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 315.7 միլիոն դրամ⁶:

Այսպիսով, 2007-ին ավելի քան 18200 ուսանողներ կսովորեն պետական պատվերով, որից ավելի քան 15 հազարը կստանան նաև կրթաթոշակներ: Պետպատվերի համար ընդամենը կծախսվի 2.9 միլիարդ դրամ կամ 8.5 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ կրթաթոշակների համար՝ 975 միլիոն դրամ կամ 2.7 միլիոն ԱՄՆ դոլար: Բարձրագույն մասնագիտական կրթության այս հանրային ծրագիրն ընդամենը արժե 3.9 միլիարդ դրամ կամ 11 միլիոն ԱՄՆ դոլար:

Ի լրումն, սոցիալական ապահովության և ապահովագրության ոլորտի ծրագրերի շրջանակներում զոհված (մահացած) զինծառայողների երեխաներին բուհերում վճարովի ուսուցման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը կտրամադրվի մինչև 15.0 միլիոն դրամ:

⁵ Մեկ ուսանողի հաշվով տարեկան միջինում կազմում է 167,821 դրամ:
⁶ Մեկ ուսանողի հաշվով ամսեկան միջինում շուրջ 5400 դրամ:

6. Դիպլոմների, թե՞ կրթության արտադրություն

Կրթությունը հայ հասարակությունում ավանդաբար հանդիսացել է կարևորագույն արժեք. յուրաքանչյուր հայ ձգտել և ձգտում է, որ իր երեխան կրթված լինի (կամ գոնե այդպիսին համարվի): Ժամանակակից աշխարհում, ուր կարող են շահել միայն առավել մրցունակները, Յայաստանի համար առավել պարզորոշ են նախագծվում զարգացման հնարավոր նախապայմանները: Մրցունակությունը և արդյունավետությունը ոչ միայն տնտեսական զարգացման այլև ազգային անվտանգության և անկախության առումներով են դառնում Յայաստանի համար հրամայական: Չնայած դեռ տնտեսական անցման առաջին իսկ տարիներից թմբկահարվում էր Յայաստանի բարձրորակ և որակյալ աշխատուժի գոյության մասին, որը զարգացման երաշխիք պետք է լիներ, իրականությունն այլ բան ցույց տվեց: Տնտեսական աճի հիմնական աղբյուրները շարունակում են մնալ արտերկրից ստացվող միջոցները և կապիտալ շինարարությունը, որը տևական բնույթ չի կարող ունենալ: Գիտատար և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրություններն աննշան դեր ունեն և զարգանում են այնքանով, որքանով զարգանում են ռեգիոնում ընդհանրապես, և ոչ ավելին:

Անցած 10-15 տարիների ընթացքում կրթական համակարգը, հատկապես բարձրագույն կրթության համակարգը գրեթե ռեֆորմի չի ենթարկվել՝ պահպանելով նախկին սովետական ժամանակավրեպ բովանդակությունը, ձևը և կառավարումը: Կոռուպցիան և անորակ կրթությունը լայն տարածում են գտել: Բարձրագույն կրթության համակարգը չի արտացոլում ներքին և համաաշխարհային շուկայի պահանջները:

Յանրապետությունում գործում են 22 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք ունեն 11 մասնաճյուղեր: Միաժամանակ գործում են 67 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ⁷: Այսինքն՝ Յայաստանի պես փոքր երկրում գործում են շուրջ 100 ԲՈՒՅ-եր (համալսարաններ, ինստիտուտներ և դրանց մասնաճյուղեր), որտեղ բարձրագույն կրթություն են ստանում ավելի քան 97 հազար ուսանողներ՝ կամ 20-30 տարեկան մշտական բնակչության 17.5 տոկոսը:

Չափազանց մեծ է նաև ԲՈՒՅ-երում առաջարկվող մասնագիտությունների քանակը: 2007/2008 ուստարվա համար միայն պետական ԲՈՒՅ-երում առաջարկվում են (կամ ուսուցանվելու են) ավելի քան 230⁸ տարբեր մասնագիտություններ, որը դեռևս 1999 թվականին կազմում էր 171: Մասնագիտությունների աճը, թերևս, հիմնավորվում է նոր ժամանակների պահանջներին մասնագիտությունների աստիճանական համապատասխանեցման անհրաժեշտությամբ, սակայն արդյո՞ք երկրում առկա է այդքան ներուժ՝ թե՛ հին և թե՛ նոր մասնագիտությունների գծով այսքան մեծ առաջարկ ապահովելու համար:

⁷ 2005/2006 ուսումնական տարվա տվյալներն են: Պետական և ոչ պետական ԲՈՒՅ-ում սովորել են համապատասխանաբար 73700 և 24000 սովորողներ: Աղբյուրը՝ Յայաստանի վիճակագրական տարեգիրք 2006, 33 ԱՎԾ:

⁸ Աղբյուրը՝ «Յայաստանի Յանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման 2007/2008 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին» 33 կառավարության N 1570-Ն որոշում, նոյեմբեր 2006թ.:

Բարձրագույն կրթության համակարգը իրականում պահանջում է մեծ բարեփոխումներ: Առկա հիմնախնդիրները շատ են, որոնցից առանձնացրել ենք հետևյալները:

Թեև պետությունը հռչակել է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացում, այնուհանդերձ բարձրագույն կրթության համակարգն ազատականացված չէ և ենթակա է ուժեղ ադմինիստրատիվ կարգավորման: Փոխանակ գնահատվեն արդյունքները և հետևանքները, կարգավորվում է կրթական գործընթացը և առաջարկը, մրցակցային պայմանները հավասար չեն: Այս իրողության հիմնական մեղավորը բանակից տարկետման իրավունքի գոյությունն է: Նախ, այն անհավասար պայմաններ է ստեղծում բարձրագույն կրթություն մատուցելու իրավունք ունեցող և գործող տարբեր օրինական հաստատությունների միջև: Այն ԲՈՒՅ-երը, որոնց հիմնադիրը պետությունն է՝ արտոնյալ են, իսկ այն ԲՈՒՅ-երը, որոնց հիմնադիրը այլ անձիք և կազմակերպություններ են՝ ի սկզբանե որակվել են «ցածր կարգի» և դատապարտվել զարգացման սահմանափակ հնարավորությունների: Այսպիսով, բարձրագույն կրթություն արտադրելու շուկան ճայաստանում ազատ չէ, և խախտված են մրցակցության պայմանները: Պետական ԲՈՒՅ-երին տրամադրելով բանակից տարկետման իրավունք՝ սահմանափակվել է այս ԲՈՒՅ-երի անկախությունը: Բոլոր պետական ԲՈՒՅ-երն ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակ, որը ենթադրում է, որ դրանք անկախ և ինքնուրույն իրավաբանական անձիք են: Սակայն, քանի որ պետական ԲՈՒՅ-երում սովորողը ստանում է տարկետում, ուստի և Կառավարությունն է որոշում սովորողների քանակը՝ ելնելով տարկետում ստացողների քանակի որոշումից: Այսինքն՝ պահանջարկը բավարարվում է ոչ թե շուկայական մեխանիզմով, այլ ադմինիստրատիվ կարգավորվող առաջարկով:

Կրթական համակարգի հաջորդ խնդիրն այն է, որ այն ունի նումինալ և կեղծ հեղինակություն և որակ: Կրթվում են սոսկ սոցիալական ստատուս ամրապնդելու համար և ոչ թե մասնագետ դառնալու և վաղը, վստահաբար, այդ մասնագիտությամբ զբաղվելու և վաստակելու համար: Նույնիսկ նրանց համար, ովքեր այս դասից չեն, միևնույնն է, ճակատագիրն առատաձեռն չի լինելու: Երկար տարիների ներդրումից հետո, ավարտելով ԲՈՒՅ-ը՝ կպարզվի, որ աշխատանք գտնելու համար համապատասխան գիտելիք, փորձ և վստահություն չունեն:

Կրթությունը բովանդակային իմաստով չի համապատասխանում ներկայացվող պահանջներին: Գործատուն ստիպված է ստանձնել համալսարանի դերը և լրացնել բացերը: Արդյունքում, դժվարանում է աշխատանքի տեղավորման հարցը՝ աղավաղվում աշխատանքի շուկան: Փորձառու մասնագետները հայտնվում են չափազանց բարձր հարաբերական առավելության մեջ: Դրա արդյունքում, ասենք, տնտեսագետի նույն մասնագիտություն ունեցողների աշխատավարձերը կարող են տարբերվել՝ ամսական 60 հազար դրամից մինչև 900 հազար դրամ: Շատերն աշխատանք գտնելու կամ աշխատանքում առաջխաղացման համար ստիպված են կրկին ստանալ կրթություն՝ այս անգամ արտերկրում: Արդյունքում, տեղի ունի երիտասարդ և կարող մասնագետների չկառավարվող արտահոսք:

Ոչ պետական ԲՈՒՅ-երը, չկարողանալով մրցել պետական ԲՈՒՅ-երի հետ, ստիպված ստեղծել են նոր շուկա՝ նվազեցնելով որակը շեշտը դնելով քանակի վրա: Որակի հսկողության և

գնահատման որևէ շուկայական կամ հասարակական մեխանիզմի բացակայության արդյունքում ոչ պետական ԲՈՒՅ-երի քանակը չափազանց ընդլայնվել է: Արդյունքում, սրանք փոխարինում են նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտին: Փոխանակ մարդիկ ստանան նախնական կամ միջին մասնագիտական կրթություն, ստանում են բարձրագույն կրթության դիպլոմ՝ առանց գիտելիքի:

Քանի որ բարձրագույն կրթությունը սոցիալական հատուկ ստատուս և հպարտություն է, օժիտի տեսակ կամ բանակից «ազատվելու» ճանապարհ, ուստի բոլորն են ուզում ընդգրկվել և կրել այդ բարիքները, «հետ չմնալ ուրիշներից»: Բանակի տարկետման առկայությունն աղավաղում է նաև անհատների կրթություն ստանալու նախապատվության կամ որոշման ճշմարտացիությունը: Այս երևույթը նաև կոռուպցիոն մեծ ռիսկեր է պարունակում:

Ընդհանրապես, կրթական համակարգում և, հատկապես, բարձրագույն կրթության ոլորտում կոռուպցիան լայնորեն տարածված երևույթ է: Այն աղավաղում է կրթական գործընթացը, նվազեցնում առանձին անձանց ճշմարիտ խթանները, դաստիարակում և վերարտադրում է կոռումպացված հասարակություն:

ԲՈՒՅ-երը, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտներ, գիտական և հետազոտական ռեսուրս կենտրոններ, չեն իրականացնում իրենց այս գործառույթները հասարակությունում: Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող զարգացումների և բարեփոխումների գործընթացում մեծամասամբ ինտեգրված չեն: Կիրառական հետազոտություններն իրականացվում են մեծամասամբ ԲՈՒՅ-երից դուրս, նրանք չեն մասնակցում երկրում մշակվող սոցիալական, տնտեսական, քաղաքական ծրագրերի և ռազմավարությունների մշակմանը՝ չբերելով իրենց ներդրումը:

Վերջապես, հասկանալի և ընդունելի չէ իրականացվող պետական պատվերի քաղաքականությունը: Կրթությունը համարվում է աղքատության հաղթահարման կարևոր ուղի, իսկ երկիրն իրականացնում է ԱՅՈՏ: Այնինչ, բարձրագույն կրթության բնագավառում պետական պատվերի քաղաքականությունը չունի սոցիալական բնույթ և չի նպաստում սոցիալապես անապահով և աղքատ ընտանիքների բարձրագույն կրթության ստանալու սահմանադրական իրավունքի իրացմանը:

7. Զաղաքականության վերանայման պահանջը

Ըստ ՀՀ Կրթության մասին օրենքի, կրթության բնագավառը գերակա զարգացման ոլորտ է և կարևորվում է որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Այս առումով, բարձրագույն կրթությունը չի կարող անմասն մնալ և պետք է կարևորվի որպես երկրի և կրթության մյուս ոլորտների զարգացման նախապայման:

Պետական քաղաքականության հիմքը նախ և առաջ սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ, ըստ որի՝ Հայաստանի «յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք օրենքով սահմանված կարգով»⁹: Այսինքն՝ խոսքը վերաբերվում է մարդու կրթության իրավունքի պաշտպանությանը: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը որպես պետական քաղաքականության խնդիրներ սահմանում է՝ կրթության որակի ապահովումը, կրթություն համակարգի զարգացումը և միջազգային ասպարեզում մրցունակության բարձրացումը, պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստման աջակցությունը, անկախ սեփականության ձևից՝ ԲՈՒՀ-երի իրավահավասարության ապահովումը և այլն¹⁰:

Այնուհանդերձ, կարծես թե այս խնդիրների լուծման ուղղությամբ արդյունավետ քայլեր չեն իրականացվում կամ գործնականում իրավիճակը չի բարելավվում: Պետական բյուջեի վերլուծությունը պարզ է դարձնում, որ վերջին տարիներին բարձրագույն կրթության ոլորտում փաստացի իրականացվող պետական քաղաքականությունը պետական պատվերի շրջանակներում անվճար կրթության ապահովումն է: Այս նպատակի համար ծախսվում է բարձրագույն կրթության բյուջեի 97 տոկոսը: Արդյունքում, ավելի քան 18 հազար ուսանողներ սովորում և սրանց մեծամասնությունը կրթաթոշակներ են ստանում հարկերի հաշվին: Մյուս ուղղություններով գրեթե ծրագրեր չկան կամ շատ փոքր են՝ ոչ էական: Կրկին այն դեպքն է, երբ օրենքը հրաշալի է, իսկ իրողությունը բացարձակ տարբեր: Հենց կրթության մասին օրենքի պահանջները բավարարելու համար անհապաղ պետք է ձեռնարկել ոլորտի բարեփոխումները և վերանայել մի շարք քաղաքականության ուղղություններ:

Առաջարկվում է նախ վերացնել բանակից տարկետման իրավունքը (հակառակ դեպքում այն պետք է տրամադրել բոլոր հավատարմագրված ԲՈՒՀ-երին): Այսինքն՝ պետք է, ինչպես օրենքն է սահմանում, հավասար պայմաններ ստեղծել բոլոր ԲՈՒՀ-երի համար՝ անկախ սեփականության ձևից: Սա մի կողմից կնվազեցնի կեղծ խթանները և նախապատվությունները, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը, իսկ մյուս կողմից՝ ոչ պետական ԲՈՒՀ-երի զարգացման հնարավորություն կստեղծի: ԲՈՒՀ-երի միջև կգործի իրական մրցակցություն և չեն լինի պետության կողմից «ընդունվողներ» և «չընդունվողներ»: Թեև միևնույն է, պետական ԲՈՒՀ-երը կշարունակեն լինել արտոնյալ պայմաններում, քանի որ հիմնադրից (այսինքն՝ Կառավարությունից) անհատույց օգտագործման և տնօրինման

⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 39 հոդված:

¹⁰ Տե՛ս «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

համար ստացել են միլիոնավոր դոլարներ արժեցող պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող գույք՝ ԲՈՒՀ-երի շենքերը: Մասնավորները ստիպված են լինելու իրենց գործունեությունից ստացվող հասույթից մասհանումներ անել շենքերի և շինությունների տիրապետման և տնօրինման համար: Այսինքն՝ մրցակցային կրթություն արտադրելու համար, այլ հավասար պայմաններում, համեմատաբար փոքր հնարավորություններ ունեն: Այսպիսով, թեև սկզբնական պայմանները կլինեն ոչ հավասար, սակայն ազատ մրցակցության իրական երաշխիքներ կստեղծվեն:

Տարկետման իրավունքի վերացումը թույլ կտա, որ մեծանա պետական ԲՈՒՀ-երի անկախության աստիճանը, և նրանք ինքնուրույնաբար, ելնելով շուկայի պահանջներից, որոշեն առաջարկը: Այսինքն՝ ԲՈՒՀ-երի ինքնուրույնությունը և լիազորությունները հարկավոր է ընդլայնել, սակայն որակի գնահատման չափանիշները՝ շատ խստացնել:

Քաղաքականությունները գործնականում ուղղված չեն նաև կրթության որակի ապահովման, կրթության համակարգի զարգացման և միջազգային ասպարեզում մրցունակության բարձրացման խնդիրներին կամ դրանք պարզապես արդյունավետ չեն: Անցումը կրեդիտային համակարգին այս իմաստով չափազանց կարևոր էր, սակայն ամենևին բավարար չէ: Կրթության որակի ապահովման համար նախ պետք է համապատասխանեցնել կրթական ծրագրերը և մշակույթը, վերապատրաստել դասախոսներին, իրականացնել դասախոսների փոխանակման ծրագրեր, ուժեղացնել և ընդլայնել համալսարանների արտաքին կապերը և միջազգային հարաբերությունները, խթաններ ստեղծել, որ արտերկրում կրթված լավագույն մասնագետները դասավանդեն հայրենական ԲՈՒՀ-երում: Առանց համարձակ կադրային քաղաքականության և միջազգայնորեն ընդունելի կրթական կուլտուրայի և կրթական ծրագրերի ներդրման, կրթության զարգացման մասին խոսք չի կարող լինել: Այս ամենի համար պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերը պետք է ընդլայնվեն: Մինչդեռ, ինչպես նշվեց, գրեթե ամբողջ բյուջեն ուղղվում է 18000 ուսանողների կրթությունը ֆինանսավորելուն և կրթաթոշակներին:

Այս ծրագիրը (բարձրագույն կրթության պետպատվերը) թերևս ուղղված է օրենքով սահմանված քաղաքականության հաջորդ կարևոր խնդրին՝ պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստման աջակցությանը, ինչպես նաև մարդկանց բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացմանը: Այնուհանդերձ գտնում ենք, որ այս խնդիրները նույնպես արդյունավետորեն չեն լուծվում: Պետական պատվերի շրջանակներում ԲՈՒՀ ընդունվելու համար հարկավոր է հավաքել ամենաբարձր միավորները, իսկ դա հնարավոր է, եթե մյուսներից շատ ավելի շատ գիտելիքներ ունես: Հայտնի է, որ հանրապետության շատ հանրակրթական դպրոցներում պարզապես մատուցվող գիտելիքներն ինչ-ինչ պատճառներով չեն կարող բավարարել ամենաբարձր միավորները հավաքելու համար, կամ նույնիսկ վճարովի ընդունվելու: Շատ պարզ պատճառներով, հատկապես, մարզերում և հեռավոր գյուղերում խնդիրն ավելի բարդ է: Հայտնի է իրականությունը, որ ԲՈՒՀ ընդունվելու համար համապատասխան գումարի դիմաց պետք է ստանալ լրացուցիչ դասեր և գիտելիքներ կրկնուսուցիչների մոտ: Այս

իրողությունը նոր չէ և բավականին երկար տարիների պատմություն ունի: Նման հնարավորությունից, բնականաբար, կարող են օգտվել միայն սոցիալապես ապահով և ոչ աղքատ ընտանիքների երեխաները: Ավելին, խիստ մրցույթը պահանջում է, որ դիմորդն այդ դասերը ստանա հատկապես փորձառու և լավ կրկնուսուցչի մոտ, իսկ լավագույն կրկնուսուցիչները «թանկ արժեն»: Հայաստանում ցավոք չկան համապատասխան քանակական հետազոտություններ, սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ հատկապես վերջին տարիներին պետպատվերի իրավունք ստանում են այն երեխաները, ում ծնողները կրթված են, ունեն լավ կապեր և կարողություններ, ընտանիքը սոցիալապես ապահովված է: Աղքատ ընտանիքների, հեռավոր գյուղերում բնակվող ընտանիքների, կրթության լավ մակարդակ և կապեր չունեցող ծնողների երեխաները պետպատվերով բարձրագույն կրթություն ստանալու շանս գործնականում չունեն: Մյուս կողմից, թեև Հայաստանում կրթությունը թանկ չէ (տարեկան մինչև 1000 ԱՄՆ դոլար), սակայն հարուստ և ապահովված ընտանիքները, առանձին դեպքերում ծախսելով շատ ավելի մեծ գումարներ, փորձում են անսպասելիորեն սովորել պետական պատվերի հաշվին: Պետպատվերով սովորելը *խելքի և սոցիալական ստատուսի բարձր մակարդակի վկայություն է* համարվում, և մերօրյա «Էլիտար պահանջմունքներից» մեկն է: Ուստի, մարդիկ շահագրգիռ են վճարել ամբողջ ուսուցման տարիների համար պահանջվող գումարից նույնիսկ եռակի անգամ ավելի մեծ գումար՝ միայն թե իրենց երեխաներն էլ սովորեն պետպատվերով: Կոռուպցիոն երևույթները իրենց հերթին նվազեցնում են աղքատ և անապահով ընտանիքների երեխաների կրթական համակարգ ընդգրկվելու հավանականությունը:

Եթե նշված 18000 ուսանողների կրթության ֆինանսավորումը իրականացվում է «պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստման աջակցության» խնդրի իրագործման համար, ապա կրկին ծրագիրն արդյունավետ չէ: Նախ, այս 18000 ուսանողներից մեծամասնությունը մասսայական տարածում ունեցող մասնագիտությունների գծով են սովորում և նման մասնագետների պակաս երկրում հաստատ չկա: Եթե խնդիրն այնուամենայնիվ տվյալ մասնագիտությունների գծով որակյալ մասնագետների բացը լրացնելն է, ապա դա շատ կարևոր և հրատապ է: Սակայն մեթոդը կրկին սխալ է. ինչ իմաստ ունի պետպատվերի շրջանակներում Հայաստանում ամեն տարի արտադրել, ասենք թե, տնտեսագետներ: Չէ որ մի շարք տնտեսագետներ այսօր գործազուրկ են, իսկ Հայաստանի որևէ ԲՈՒՀ-ում հնարավոր չէ կամ չկա այն ռեսուրսը, որ արտադրվեն միջազգայնորեն ընդունելի որակի տնտեսագետ մասնագետներ, կամ գոնե ավելի լավ որակի մասնագետներ քան նախկինում են արտադրվել: Եթե երկիրն ունի որակյալ մասնագետի պահանջ, միթե հայտնի չէ, որ աշխարհում կան շատ ավելի լավ ԲՈՒՀ-եր քան Հայաստանի ԲՈՒՀ-երն են, որոնք արտադրում են այդ մասնագետներին: Ինչու չի ներմուծվում կրթությունը կամ պետական պատվերի շրջանակում կրթություն չեն ստանում արտերկրում: 18000 ուսանողի կրթական ծախսերը հոգալու կամ «դիպլոմավորված գործազուրկ» պատրաստելու գումարով կարելի է պատրաստել եվրոպական լավագույն համալսարաններում կրթված շուրջ 1000 մասնագետների: Ո՞ր տարբերակն է Հայաստանի համար ավելի ձեռնտու:

Այսպիսով, կրթության մատչելիության և երկրի զարգացման համար անհրաժեշտ կամ կարևոր մասնագետների ապահովման նպատակներից ելնելով, առաջարկվող քաղաքականության փոփոխությունները պետական պատվերի շրջանակներում հետևյալն են՝

- Նախ հարկավոր է փոխել քաղաքականությունը՝ ոչ թե ԲՈՒՀ-երին տալ պետպատվեր, այլ մարդկանց տալ գումար՝ ԲՈՒՀ-երում սովորելու համար: Լսարանում բոլորը հավասար կլինեն, բոլորն են վճարում կրթության համար, այն տարբերությամբ, որ մեկը գումարը վերցնում է տնից, իսկ մյուսը՝ պետական ֆոնդից: Սա կփոխի հասարակության վերաբերմունքն անվճար սովորելու վերաբերյալ: Արդյունքում, հարուստները գոնե չեն ձգտի օգտվել համակարգից, որոշակիորեն կնվազեն կոռուպցիոն ռիսկերը:
- Կրթության մատչելիությունը բարձրացնելու համար հարկավոր է աղքատ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կազմակերպել ընդունելության քննություններին պատրաստման կարճատև դասընթացներ կամ մրցութային կարգով գրանտներ տալ՝ նման դասընթացներին մասնակցելու համար:
- Պետությունը պետք է մրցութային կարգով կրթական վարկեր տրամադրի բարձրագույն կրթություն ստանալու համար և, ընդհանրապես, խրախուսի երկրում կրթական վարկերի տրամադրման ինստիտուտի զարգացմանը:
- Պետպատվերի շրջանակներում սովորողները մեծամասամբ պետք է ստանան երկրի համար ռազմավարական կարևորություն ունեցող մասնագիտություններ: Ընդ որում, գոնե առաջիկա 5-10 տարիների ընթացքում պետությունը պետք է առանձին մասնագիտությունների գծով իրականացնի կրթության ներմուծում: Օրինակ, եթե երկիրը կարիք ունի որակյալ տնտեսագետների, ապա պետական պատվերը պետք է տրվի ոչ թե տեղական ԲՈՒՀ-երին, որոնք միջազգայնորեն մրցունակ չեն, այլ լավագույն եվրոպական ԲՈՒՀ-երին: Այն երիտասարդները, ովքեր իրենց կրթությունը պետության հաշվին կստանան եվրոպայում, կպարտավորվեն ավարտելուց հետո աշխատել հայրենի երկրում, թեկուզ և հենց նույն տնտեսագիտական ԲՈՒՀ-երում՝ նպաստելով թե՛ կրթության, թե՛ երկրի զարգացմանը:

Պետական պատվերի համար ներկայիս հատկացված շուրջ 4 միլիարդ դրամի բյուջեն առաջարկվում է բաժանել երեք մասի.

- 1) Հայաստանում բարձրագույն կրթություն ստանալու համար փոխհատուցման ծրագրի (այսինքն՝ ներկայիս պետպատվերի) համար տրամադրել մինչև 2 միլիարդ և այս ծրագրում ընդգրկել տարեկան 9000 ուսանողներ (18000-ի փոխարեն),
- 2) արտերկրում բարձրագույն կրթություն ստանալու համար փոխհատուցման ծրագրի համար տրամադրել մինչև 1.1 միլիարդ և այս ծրագրում ընդգրկել տարեկան 250 ուսանողներ,
- 3) մնացած շուրջ 900 միլիոն դրամը՝ աղքատ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների աջակցություն ԲՈՒՀ-երի ընդունելության քննություններին մասնակցելու համար, ինչպես նաև կրթական ծրագրերի ներմուծման զարգացման, վերապատրաստման, կրթական վարկերի և այլ ծրագրերի իրականացման համար: